

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՉԱՆՑՈՒԹՅԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՉԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՎ

ՅԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի գործունեության
2015 թ. փետրվարի 20



ՀՀ կրթության
և գիտության
նախարարություն



Այբ

կրթական հիմնադրամ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Այս փաստաթուղթը ներկայացնում է Կրթության գերազանցության ազգային ծրագրի (ԿԳԱՃ) հայեցակարգից և ծրագրի իրագործման պլանից բխող, 2013-2014 թվականներին կատարված համապատասխան բոլոր աշխատանքների նկարագիրը:

2014 թվականին Կրթության գերազանցության ազգային ծրագրի գործունեության հիմնական առաջնահերթությունները երկուսն էին՝ միջազգային բարձր որակավորման գործընկերոջ/ գործընկերների բացահայտումն ու ներգրավումը, ինչպես նաև այդ գործընկերոջ/գործընկերների հետ ծրագրի նախապատրաստական աշխատանքների լիակատար ինստիտուցիոնալացումը՝ ծրագրի ամուր հենք ստեղծելու նպատակով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական համակարգի բարելավումը համընդհանուր ու բազմաբարդ խնդիր է և պահանջում է բազմակողմանի մոտեցումներ: Համակարգի մրցունակությունը, երկարաժամկետ զարգացումն ու համընդհանուր առաջընթացը էականորեն պայմանավորված են համակարգի բոլոր բաղադրիչների բարելավմամբ:

Վերոնշյալ բաղադրիչները ներառում են հանրակրթական համակարգում դասավանդման որակը (դասավանդման մեթոդաբանությունը, առարկայական ծրագրերը, առարկայական դասագրքերն ու դասագրքաստեղծման մեթոդաբանությունը), ուսուցիչների գնահատումը, աշակերտի գնահատման մեթոդները, դպրոցական համակարգի էթիկան և մշակույթը: Միևնույն ժամանակ ուսուցիչների մասնագիտական աճի լայն հնարավորությունները, մրցունակ աշխատավարձը, հասարակական պահանջի ձևավորումը և հասարակության մեջ ուսուցչի դերի բարձրացումն այն գործոններն են, որոնք առանցքային կարող են դառնալ Հայաստանի դպրոցական կրթության ողջ համակարգի կատարելագործման համար:

Համաշխարհային լավագույն փորձի հետազոտությունը ցույց է տալիս, որ չկա միջազգայնորեն մրցունակ հանրակրթական մի մոդել, որը գերակա է մյուսների նկատմամբ: Փոխարենը՝ յուրաքանչյուր պետություն մշակում է իր սեփական համակարգը՝ միջազգային լավագույն փորձի տարբեր համակարգերը փոփոխելով և հարմարեցնելով իր ուրույն կարիքներին ու հանգամանքներին:

Կրթության գերազանցության ծրագրի ստեղծման գործընթացում Հայաստանի համար հատկապես էական է համաշխարհային ճանաչում և խոր կրթական մասնագիտացում ունեցող հաստատության՝ որպես ծրագրի հիմնական միջազգային գործընկերոջ ներգրավումը՝ ծրագրի գերազանցությունը և միջազգային լավագույն փորձին համապատասխանությունը ապահովելու համար:

2014 թվականին Կրթության գերազանցության ազգային ծրագրի գործունեության հիմնական առաջնահերթությունները, վերոնշյալ հանգամանքներից ելնելով, երկուսն էին՝ միջազգային բարձր որակավորման գործընկերոջ կամ գործընկերների բացահայտումն ու ներգրավումը, ինչպես նաև այդ գործընկերոջ կամ գործընկերների հետ ծրագրի արդյունավետ իրագործման համար նախապատրաստական աշխատանքների լիակատար ինստիտուցիոնալացումը՝ ծրագրի ամուր հենք ստեղծելու նպատակով:

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ինչպես նշված է արդեն լիովին հանրայնացված Կրթության գերազանցության ազգային ծրագրի հայեցակարգում, միջազգային գործընկերների հետ աշխատանքը կառուցվել և կառուցվում է հետևյալ նպատակներով.

1. ապահովել միջազգայնորեն մրցունակ ուսումնական ծրագրի մշակում, նյութեր, գնահատում, միջազգային ճանաչում, ինչպես նաև շարունակական կատարելագործում և որակի ապահովում.
2. մշակել ուսուցիչների հավաստագրման երկու մակարդակ՝ ներառելով փորձարկում, վերապատրաստողների վերապատրաստում, գնահատում և որակի շարունակական ապահովում:

ԿԳԱԾ-ի նախաձեռնող խումբը, հիմք ունենալով միջազգային ճանաչման գերազանցության ծրագրի ստեղծման նպատակները, որ ամրագրված են ԿԳԱԾ-ի հայեցակարգում, այդ ճանապարհին լավագույն գործընկերոջ բացահայտման աշխատանքներն իրականացրել է երկու հիմնական փուլով.

1. կրթական միջազգային լայնածավալ բարեփոխումների, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման խնդիրների ոլորտներում հստակ մասնագիտացված և համաշխարհային հարուստ փորձ ունեցող կազմակերպությունների ուսումնասիրություն.
2. ծրագրի նպատակներին լավագույնս համապատասխան հնարավոր գործընկերների բացահայտում, ծրագրային խնդիր-առաջարկների ձևակերպում և նախնական բանակցությունների վարում.

1.1. Կրթական միջազգային գործընկերների ուսումնասիրություն և ընտրություն

Կրթության գերազանցության ազգային ծրագրի նպատակներին լավագույնս համապատասխանող գործընկերոջ ընտրությունն ապահովելու համար ԿԳԱԾ-ի նախաձեռնող խումբը 2013 թվականին և 2014 թվականի առաջին եռամսյակում իրականացրել է միջազգային լայնածավալ կրթական, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական որակավորման բարեփոխումներ իրականացնող կազմակերպությունների հիմնարար ուսումնասիրություն՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1. միջազգայնորեն բարձր հեղինակություն վայելող կրթական կազմակերպություն՝ կրթության և հատկապես ուսուցիչների մասնագիտական զարգացման ոլորտում բարեփոխումների հարուստ փորձով.
2. կազմակերպության որպես լավագույնի ճանաչում սեփական կրթական համակարգում.

3. համաշխարհային հստակ ներկայություն տարբեր երկրներում իրականացված ազգային համակարգային բարեփոխումներում՝ ամենաբարձր մակարդակով:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում՝ 2014 թվականի առաջին եռամսյակի սկզբում՝ Նախանշվեցին Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի (University College of London, Institute of Education)՝ որպես ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման ոլորտի գործընկերոջ, և Քեմբրիջի համալսարանի «Քեմբրիջի միջազգային քննություններ» (Cambridge International Examinations) կենտրոնի՝ որպես ներդրվելիք կրթական համակարգի (Արարատյան բակալավրիատի) միջազգային համաքննման (benchmarking) գործընկերոջ, թեկնածությունները:

Հարկ է նշել, որ ընտրված երկու թեկնածուներն էլ ակտիվորեն ներգրավված են համաշխարհային լայնածավալ և խոշոր ֆինանսավորմամբ կրթական բարեփոխումների մեջ: Հայաստանում, սակայն, իրականացվելիք աշխատանքների համեմատաբար սակավ ֆինանսավորումը՝ Նախնական բանակցություններում էական բարդություն էր ստեղծում միջազգային գործընկերներին հետաքրքրելու ուղղությամբ:

1.2. Գործընկերների բացահայտում, ընտրության Նախնական հաստատում

Թեկնածուների հետ բանակցություններին էլ ավելի առարկայական բնույթ տալու համար 2014 թվականի հունվար ամսին տեղի ունեցավ ԿԳԱԾ-ի Նախաձեռնող խմբի երեք անդամների պաշտոնական այցը Քեմբրիջի համալսարան, ուր կազմակերպվեցին ծավալուն հանդիպումներ համապատասխան ներկայացուցիչների, ինչպես նաև դասախոսական կազմի հետ:

2014 թվականի առաջին եռամսյակի ավարտին իրականացված բազմաթիվ բանակցությունների և ծրագրային քննարկումների արդյունքում, առաջնորդվելով գործընկերների ընտրության արդեն ներկայացված չափորոշիչներով, ուրվագծվեցին ԿԳԱԾ-ի միջազգային գործընկերներն ի դեմս՝ «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի, որոնց հետ էլ սկսվեցին բանակցությունները ներգրավման ձևաչափերի և ֆինանսավորման ուղղությամբ:

Ըստ պայմանավորվածության՝ «Քեմբրիջի միջազգային քննությունները» պիտի իրականացնեն Արարատյան բակալավրիատի՝ որպես ներդրվելիք ոչ անգլալեզու միջազգային կրթական համակարգի, և միջազգային բարձրագույն ճանաչման կրթական չափորոշիչների (Cambridge A, AS levels, և AP level) համաքննումն ու համակարգային բարեփոխումներում ծրագրային օժանդակությունը:

Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտն իր հերթին, լինելով լավագույնը ուսուցիչների մասնագիտական որակավորման ոլորտում թե սեփական ազգային կրթական համակարգում և թե աշխարհում, պիտի զբաղվեր նոր կրթական համակարգի՝ Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական որակավորման ապահովման խնդիրներով:

Համաշխարհային մեծ վարկ և մասնագիտացում ունեցող վերոնշյալ երկու կառույցների հետ համագործակցության շնորհիվ Հայաստանում հնարավոր կդառնա մրցունակ և խստապահանջ ուսումնական ծրագրի՝ Արարատյան բակալավրիատի ներդնումը: Այն նպատակ ունի դառնալ միջազգայնորեն ճանաչված գերազանցության հարթակ, որը հասանելի կլինի Հայաստանի և հայկական սփյուռքի աշակերտներին ու դպրոցներին՝ դարձնելով Արարատյան բակալավրիատը հայագիտական բովանդակությամբ միակ այդօրինակ հարթակը:

2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԱՑՈՒՄ

Կրթության գերազանցության ազգային ծրագրի նախապատրաստական աշխատանքներն ինստիտուցիոնալ ամուր հենքի վրա դնելու նպատակով ԿԳԱԾ-ի նախաձեռնող խումբը 2014 թվականի երկրորդից չորրորդ եռամսյակներում հետամուտ եղավ հետևյալ գործընթացներին.

1. առաջատար կրթական համակարգ ունեցող և/կամ ներկայում ստեղծող երկրների համապատասխան կառույցների աշխատանքային փորձի գործնական ուսումնասիրություն, հնարավոր համադրելիության ուսումնասիրում, խոչընդոտների, վտանգների և հնարավոր լուծումների դուրս բերում.
2. միջազգային գործընկերների անմիջական ներգրավումն ապահովելու նպատակով նախապես սրանց ներկայացված խնդիր-առաջարկների հստակեցում.
3. Կրթության գերազանցության ազգային ծրագրի ռազմավարության ստեղծում համապատասխան լավագույն մասնագետների ներգրավմամբ.
4. Կրթության գերազանցության ազգային ծրագրի հայեցակարգի հանրայնացում համապատասխան բոլոր լսարանների հետ՝ առկա մտահոգությունները և կարծիքները ծրագրի լրամշակման ժամանակ հաշվի առնելու նպատակով:

2.1. Առաջատար կրթական համակարգերի ներդրման աշխատանքային փորձի գործնական ուսումնասիրություն

Չեղանկալի լինելով կրթության գերազանցության ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման նպատակին՝ 2014 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակներում ԿԳԱԾ-ի նախաձեռնող խմբի անդամներն այցելեցին Ֆինլանդիա և Ղազախստան՝ ուսումնասիրելու թե վաղուց արդեն ինստիտուցիոնալացված (Ֆինլանդիա) և թե ներկայում բարեփոխվող (Ղազախստան), որոշ համադրելիությամբ կրթական համակարգեր: Այցերի հիմնական նպատակը ունեցած տեսական ուսումնասիրություններն ու նկատառումները գործնական միջավայրերի հետ համադրելն ու իրագործողների փորձը լավագույնս յուրացնելն էր:

2014 թվականի մայիսի 14-15-ին Ֆինլանդիա կատարած այցի ընթացքում նախաձեռնող խումբը հանդիպեց Ֆինլանդիայի կրթական ոլորտի մի շարք առանցքային գործիչների հետ, այդ թվում՝

- Կրթության և մշակույթի նախարարության բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության բաժնի գլխավոր տնօրեն Տապիո Կոսունենի,
- Չելսինկիի համալսարանի ուսուցիչների կրթության բաժնի պրոֆեսոր Յարի Լևոնենի,

- Հելսինկիի համալսարանի Վիիկկիի ուսուցիչների վերապատրաստման դպրոցի տնօրեն Մարկկու Պիիսիայենի,
- Սուուտարիլայի ուսուցիչների վերապատրաստման դպրոցի տնօրեն Կարի Տոուրիլայի,
- Ֆինլանդիայի կրթական հարցերով ազգային խորհրդի ներկայացուցիչ պրն Լեո Պահկի:

Այցի ընթացքում մանրամասն քննարկվեցին Ֆինլանդիայում կրթական բարեփոխումների իրականացման փորձը, բարեփոխման գործընթացում խոչընդոտների կանխարգելման և հաղթահարման մեխանիզմները, բարեփոխումների հիմնական տրամաբանությունը և վերջինիս համադրելիությունը հայաստանյան կրթական միջավայրի հետ:

Գնահատելու համար հետխորհրդային տարածքում միջազգային գործընկերների կողմից ներկայում իրագործվող համակարգային բարեփոխումների փորձը՝ 2014 թվականի հունիսի 25-27-ը ԿԳԱԾ-ի նախաձեռնող խումբն այցելեց նաև Ղազախստան:

Հանդիպումներ տեղի ունեցան «Նազարբան» ինտելեկտուալ դպրոցների, կրթական ծրագրերի, մանկավարժական չափորոշիչների, գերազանցության և կրթական ռեսուրսների կենտրոնների ներկայացուցիչների հետ: Տեղի ունեցան նաև հանդիպումներ «Զեմբրիջի միջազգային քննություններ» կողմից Ղազախստանում իրականացվող կրթական բարեփոխումների թիմի հետ:

Այցը հնարավորություն տվեց էլ ավելի հստակեցնելու միջազգային գործընկերներից սպասելիքները, ինչպես նաև վերանայելու և հայաստանյան միջավայրին լիովին համապատասխանեցնելու նրանց առջև դրված խնդիր-առաջարկները ինչպես նաև սահմանելու գործընկերների հետ ամենաարդյունավետ աշխատելաճոր:

2.2. Միջազգային գործընկերների անմիջական ներգրավում

2014 թվականի երրորդ եռամսյակից ԿԳԱԾ-ի նախաձեռնող և աշխատանքային խմբերը միջազգային գործընկերների հետ մեկնարկեցին ծրագրային հիմնարար նախապատրաստական աշխատանքներն ինչպես նաև վերջնական բանակցությունները:

2014 թվականի երրորդ եռամսյակի ավարտին «Զեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնին ներկայացվեցին ավագ դպրոցի մի քանի առարկաների ծրագրերը, քննական թեստերի և դասագրքերի, առարկայական և միջառարկայական նախագծերի, ինչպես նաև տնային աշխատանքների և աշակերտներին տրված հետադարձ կապի օրինակները, կրթական արժեքների համեմատականները և ուսումնական պլանների բարոտեզագրումը:

2014 թվականի վերջին եռամսյակի սկզբում միջազգային գործընկերների հետ բանակցություններն ավարտվեցին համապատասխան պայմանագրերի կնքմամբ և ծրագրում գործընկերների լիակատար ներգրավմամբ:

«Զեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի դատին հավելյալ ներկայացվեցին տարրական, միջին և ավագ դասարանների տասնյոթ առարկաների (այդ թվում՝ արվեստի առարկաների) շաբաթական թեմատիկ բաժանումները, առարկայական ծրագրերի նկարագրությունները, յուրաքանչյուր առարկային հատկացված ակադեմիական ժամերը, աշակերտից ստացվող արդյունքների նկարագրությունը, դասընթացից սպասվող

արդյունքների նկարագրությունը, ինչպես նաև գնահատման չափանիշները՝ բոլորն անգլերեն համապատասխան թարգմանություններով:

Սեղմ ժամկետներում իրագործված աշխատանքների այսօրինակ ծավալը հնարավորություն ընձեռեց ԿԳԱԾ-ի նախապատրաստական գործընթացները արդեն եռամսյակի ավարտին տանել հաջորդ փուլ՝ հյուրընկալելով միջազգային գործընկերների հատուկ աշխատանքային խմբերին:

2014 թվականի նոյեմբերի 18-20-ը տեղի ունեցավ Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հատուկ աշխատանքային խմբի այցելությունը Չայաստան: Աշխատանքային խումբը ներառում էր հետևյալ անձանց.

1. Զիմ Ինսլի, կրթական ծրագրերի ղեկավար Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտում.
2. Յացել Բրենտ, Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի Կրթական ծրագրերի, մանկավարժության և գնահատման ֆակուլտետում բիզնեսի և տնտեսագիտության կրթության ավագ դասախոս.
3. Փոլի Գլեգ, Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի Կրթական ծրագրերի, մանկավարժության և գնահատման ֆակուլտետում բիզնեսի և տնտեսագիտության դասախոս:

Այցի ընթացքում տեղի ունեցան բոլոր առարկաներից 18 դասալսումներ Երևանի և մարզերի ութ դպրոցներում՝ գնահատելու համար ուսումնական մեթոդները: Դասալսումների արդյունքում որոշվեց ստեղծել առցանց միջավայր՝ արագացնելու համար առաջին խմբի ուսուցիչների վերապատրաստման նախապատրաստությունները:

2014 թվականի դեկտեմբերի 8-12-ը տեղի ունեցավ նաև «Զեմբրիջի միջազգային քննությունների» ներկայացուցիչների այցելությունը Չայաստան հետևյալ կազմով.

1. Աբիգեյլ Բարնեթ, Կրթական ծրագրերի բաժնի փոխտնօրեն.
2. Մեթյու Վոլֆ, Միջազգային ծրագրերի ղեկավար.
3. Անն Սմիթ, տնօրենի օգնական, Որակավորում և կրթական ծրագրերի զարգացում.
4. Նիկոլա Զլարկ, մաթեմատիկայի կրթության խորհրդատու.
5. Լիզ Բերնս, կրթության և գնահատման խորհրդատու:

Այցը հնարավորություն ընձեռեց մանրամասն քննարկելու Արարատյան բակալավրիատի կրթական բովանդակությունը, և կատարվեցին համապատասխան դասալսումներ կրթական ծրագրերի գնահատման համար, ինչն էլ հնարավորություն ընձեռեց արդեն 2015 թվականի առաջին եռամսյակում «Զեմբրիջի միջազգային քննություններից» ստանալ Արարատյան բակալավրիատի համաքննման մանրամասն զեկույցի նախնական տարբերակը համապատասխան ծրագրային դատողություններով և առաջարկներով: Զարկ է նշել, որ, ըստ զեկույցի, Արարատյան բակալավրիատի ծրագրային բովանդակությունը որոշ տեղերում զգալիորեն գերազանցում է համանման միջազգային հարթակների չափանիշներին, որոշ տեղերում էլ ունի բարելավման անհրաժեշտություն:

2.3. Կրթության գերազանցության ազգային ծրագրի ռազմավարության ստեղծում

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը լիովին ինստիտուցիոնալացնելու նպատակով 2013 թվականի առաջին եռամսյակից մինչև 2014 թվականի չորրորդ եռամսյակը մշակվեց ԿԳԱԾ-ի ռազմավարական ծրագիրը՝ համապատասխան ֆինանսական և այլ ծրագրային հաշվարկներով ու կանխատեսումներով: Վերոնշյալ համատեքստում ԿԳԱԾ-ի նախաձեռնող խումբը ներգրավեց «Ի-Վի Զոնսալթինգ» (EV Consulting) խորհրդատվական ընկերությանը մասնագիտական խոր և ամբողջական ռազմավարական փաստաթուղթ մշակելու նպատակով:

2.4. Կրթության գերազանցության ազգային ծրագրի հայեցակարգի հանրայնացում

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը լիովին հանրայնացնելու նպատակով, առաջնորդվելով կրթության հանդեպ հանրային պահանջարկ ստեղծելու, ինչպես նաև թիրախային լսարաններից ծրագրի վերաբերյալ մտահոգություններ և առաջարկներ ստանալու անհրաժեշտությամբ, ԿԳԱԾ-ի նախաձեռնող և աշխատանքային խմբերը մեկնարկեցին ծրագրի հանրային լսումները Երևանում, ԶԶ բոլոր մարզերում և Լեռնային Ղարաբաղի շանրապետությունում: Լսումներն ընթացան «ներկայացում + քննարկում» ձևաչափով՝ մասնակիցների մոտեցումները լավագույնս համադրելու համար:

2014 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցավ ներկայացում-քննարկում ԶԶ կրթության և գիտության նախարարին կից կոլեգիայի նիստում: Նույն թվականի նոյեմբերի 12-ին Մատենադարանի նիստերի դահլիճում կայացավ ԿԳԱԾ-ի հանրային լսումների բացման հանդիսությունը Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչների, ԶԶ ԿԳ փոխնախարարներ Մանուկ Մկրտչյանի և Կարինե Զարուբյուկյանի, ճանաչված մտավորականների, հասարակական գործիչների, ինչպես նաև կրթության մասնագետների մասնակցությամբ:

Չանրային լսումների մարզային փուլը մեկնարկեց 2014 թվականի նոյեմբերի 14-ին Վաղարշապատի Խաչատուր Աբովյանի թիվ 4 դպրոցում փոխքաղաքապետ Նորայր Մուրադյանի, Տ. Արտակ ավագ քահանա Սիմոնյանի և մի շարք դպրոցների տնօրենների, ուսուցիչների և Կրթության մասնագետների մասնակցությամբ:

Մարզային հանրային լսումներն ունեցան մոտ 1800 մասնակից, որոնցից մոտ 70%-ը՝ դպրոցների ներկայացուցիչներ (20%-ը՝ տնօրեններ, 80%-ը՝ առանցքային ուսուցիչներ), իսկ 30%-ը՝ մարզային հասարակության ակտիվ ներկայացուցիչներ:

2014 թվականի նոյեմբերի 18-ին «Այբ» դպրոցում տեղի ունեցավ նաև ԿԳԱԾ-ի հանրային լսում՝ այս անգամ արդեն ԶԶ գործարարների և բանկային ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Նույն թվականի դեկտեմբերի 9-ին տեղի ունեցավ նաև ծրագրի ներկայացումն ու քննարկումը Չայաստանի հանրային խորհրդում:

Ընդհանուր առմամբ Կրթության գերազանցության ազգային ծրագրի լսումներն ունեցան շուրջ երկու հազար մասնակից՝ ապահովելով ծրագրի բավականին լայնածավալ քննարկում և բազմաբնույթ կարծիքների ու մտահոգությունների հավաքագրում, որոնք իրենց արտացոլումը կգտնեն ծրագրի լրամշակման գործընթացում:

Չանրային քննարկումները շարունակվելու են նաև 2015 թվականին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես արդեն նշվել է, ԿԳԱԾ-ի հայեցակարգում 2014-2016 թթ. ժամանակահատվածը ԿԳԱԾ-ի առաջին նախապատրաստական փուլն է: Այս ժամանակահատվածում Արարատյան բակալավրիատը լրամշակվելու և ամբողջովին համապատասխանեցվելու է միջազգային չափորոշիչներին:

Ծրագիրն այնուհետև գրանցվելու է Հայաստանի Հանրապետության և միջազգային որակավորման համապատասխան հաստատությունների կողմից: Այս փուլում նաև պատրաստվելու է ծրագիրը ներդնող փորձագետ-վերապատրաստողների առաջին խումբը:

2015 թվականն այս համատեքստում հատկապես առանցքային է, քանզի հիմնական ուշադրությունը դարձվելու է «Ձեմբրիջի միջազգային քննությունների» հետ համագործակցության արդյունքում Արարատյան բակալավրիատի առարկայական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև, Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ համատեղ, առաջին խմբի վերապատրաստողների վերապատրաստմանը:

Առանցքային տեղ են գրավելու նաև միջազգային հավաստագրման համապատասխան կառույցի հետ բանակցություններն ու այդ կառույցի ներգրավումը ծրագրի մշակման և քննման գործընթացների մեջ:



ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

- Մինչև 2013 թ.** Ապագայում Արարատյան բակալավրիատի մաս կազմելիք առարկայական ծրագրերի, գնահատման մեթոդների, կրթական արժեքների զարգացում «Այբ» դպրոցում՝ մի քանի տարիների ընթացքում, ծրագրի թեստավորում և փորձարկումներ՝ տարբեր ձևաչափերով, ինդիկատորների բացահայտում ու ձևակերպում
- 2013 թ. առաջին-երկրորդ եռամսյակներ** ԿԳԱԾ-ի նախաձեռնող խմբի հանդիպումներ, քննարկումներ տարբեր մասնագիտական շրջանակներում՝ ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման համազգային կենտրոն ստեղծելու վերաբերյալ ընդհանուր մոտեցում ձևավորելու նպատակով
- 2013 թ.-ի երրորդից 2014 թ.-ի առաջին եռամսյակ** Միջազգային լայնածավալ կրթական, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական որակավորման բարեփոխումներ իրականացնող կազմակերպությունների, բարեփոխումների, որակավորման համակարգերի հիմնարար ուսումնասիրությունն
- Հայկական կրթական համակարգի, ինչպես նաև ուսուցիչների որակավորման վերաբերյալ տարբեր զեկույցների և ուսումնասիրությունների համադրում
- 2013 թ. դեկտեմբեր - 2014 թ. հունվար** Կրթության գերազանցության ծրագրի անգլերեն տարբերակի վերամշակում
- Կրթության գերազանցության ծրագրի ռազմավարական նախնական փաստաթղթի մշակում
- 2014 թ. հունվար** ԿԳԱԾ-ի ներկայացուցիչների այց Քեմբրիջի համալսարան
- 2014 թ. հունվարից գայսոր** Բանակցություններ միջազգային գործընկերների հետ, քննարկումներ, պայմանագրերի կառավարում
- 2014 թ. մայիս** ԿԳԱԾ-ի ներկայացուցիչների պաշտոնական այց Ֆինլանդիա
- 2014 թ. հունիս** ԿԳԱԾ-ի ներկայացուցիչների այց Ղազախստան
- 2014 թ. հուլիս** ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ծրագրի ռազմավարության ճշգրտում

**2014 թ. հուլիս-
օգոստոս**

Ավագ դպրոցի մի քանի առարկայի ծրագրերի, քննական թեստերի և դասագրքերի, առարկայական և միջառարկայական նախագծերի, ինչպես նաև տնային աշխատանքների և աշակերտներին տրված հետադարձ կապի օրինակների, կրթական արժեքների համեմատականների և ուսումնական պլանների քարտեզագրման փաստաթղթավորում և ներկայացում «Քեմբրիջի միջազգային քննություններին»

ԿԳԱԾ-ի աշխատանքային խմբի հանդիպումներ ուսուցիչների հետ, յուրաքանչյուր առարկայի համար առանձին ծանոթացում միջազգային ծրագրերին

**2014 թ. վերջին
եռամսյակ**

Պայմանագրերի կնքում միջազգային գործընկերների՝ «Քեմբրիջի միջազգային քննությունների» և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ

Տարրական, միջին և ավագ դասարանների (2-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններ) շուրջ 20 առարկայի ծրագրի ընդհանուր նկարագրությունների, առարկաների (ներառյալ արվեստի առարկաների) ըստ շաբաթական բաժանման ծրագրերի, յուրաքանչյուր առարկային հատկացված ակադեմիական ժամերի, թեստերի օրինակների և գնահատման չափորոշիչների ներկայացում «Քեմբրիջի միջազգային քննություններին»

«Քեմբրիջի միջազգային քննությունների» առաջ քաշած հարցերի պարզաբանումներ, հավելյալ ուսումնասիրություններ և նյութերի տրամադրում

2014 թ.-ից ցայսօր

ԿԳԱԾ-ի վարչական կառուցվածքի, աշխատակազմի և փորձագիտական խմբերի ձևավորում

2014 թ. նոյեմբեր

Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի ներկայացուցիչների այցելություն Յայաստան, ՀՀ տարբեր համայնքների ավագ դպրոցներում դասալսումների կազմակերպում

**2014 թ. նոյեմբերից
ցայսօր**

Ուսուցիչների վերապատրաստման համար դասընթացների մշակում, ուսումնասիրում

2014 թ. դեկտեմբեր

«Քեմբրիջի միջազգային քննությունների» ներկայացուցիչների այցելություն Յայաստան, դասալսումների կազմակերպում «Այբ» դպրոցում, ծրագրային քննարկումներ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԿԳԱԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Կրթության գերազանցության ազգային ծրագրի նախաձեռնող խմբի՝ 2013 թվականի ամբողջ ընթացքում, ինչպես նաև 2014 թվականի առաջինից երրորդ եռամսյակներում ծրագրի ստեղծմանն ուղղված գործունեությունն ամբողջովին ֆինանսավորվել է «Այբ» հիմնադրամի միջոցներով:

Այս ժամանակահատվածում ընդհանուր առմամբ ծախսվել է շուրջ 16,485 հազար ՀՀ դրամ՝ ուղղվելով «Հավելված 1»-ի համապատասխան ժամանակահատվածի բոլոր աշխատանքների, այդ թվում նաև միջազգային այցերի իրականացմանը:

«Հավելված 1»-ի 2014 թվականի վերջին եռամսյակի բոլոր աշխատանքների, ինչպես նաև միջազգային գործընկերների առաջին փուլի ֆինանսավորումը տրամադրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Ընդհանուր առմամբ տրամադրվել է մոտ 256, 605 հազար ՀՀ դրամ: